2019-Ը՝ ԹՈՒՄԱՆՅԱՆԱԿԱՆ ԵՎ ԿՈՄԻՏԱՍՅԱՆԱԿԱՆ ՏԱՐԻ

2019-ին, աշխարհը, ՅՈՒՆԵՍԿՕ-ի որոշմամբ, նշում է Ամենայն Հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանի եւ Կոմիտաս վարդապետի ծննդյան 150-ամյա հոբելյանները: Հաճելի է արձանագրել, որ՝ հայ գրական ու երաժշտական արվեստի հզոր սյուներ Հովհաննես Թումանյանի եւ Կոմիտասի ծննդյան 150-ամյակներին նվիրված եւ տարվա սկզբից մեկնարկած միջոցառումների շրջանակում, ներառված են նաեւ վիրահայ համայնքի կրթական եւ մշակութային օջախները, հոգեւոր եւ հասարակական բոլոր միավորումները:

ՕԶՈՒՐԳԵԹԻՈՒՄ ԲԱՑՎԵՑ ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԱՆՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Ապրիլի 2-ին, Արեւմտյան Վրաստանի Գուրիայի տարածաշրջանային կենտրոն Օզուրգեթի քաղաքում, կայացավ հոգեւոր, կրթամշակութային եւ երիտասարդական կենտրոնի բացման հանդիսավոր արարողությունը: Կոմիտաս վարդապետի 150-ամյա հոբելյանի շրջանակներում՝ նորաբաց կենտրոնը անվանակոչվեց Կոմիտաս վարդապետի անունով: Կենտրոնի բացման արարողությանը մասնակցեցին Բաթումիում Հայաստանի գլխավոր հյուպատոս Եղիշե Սարգսյանը, Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը, Բաթումիի եւ Գուրիայի հայ առաքելական եկեղեցու հոգեւոր հովիվ Արարատ քահանա Գումբալյանը:

Հիշեցնենք, որ դեռեւս մարտի 20-21-ին, Գուրիայի տարածաշրջան եւ Աջարիայի ինքնավար հանրապետություն կատարած աշխատանքային այցի ընթացքում, Վրաստանում Հայաստանի դեսպան Ռուբեն Սադոյանն այցելել էր Օզուրգեթի եւ ծանոթացել երիտասարդական կենտրոնի համար նախատեսված տարածքի վերանորոգման աշխատանքներին:

Օզուրգեթիի կենտրոնը վարձակալել է Վիրահայոց թեմը, իսկ վերանորոգությունը կատարվել է Ջինիշյան հիշատակի հիմնադրամի միջոցներով: Վերջին տարիներին տեղի հոգեւոր հովվության կողմից հիմնվել էր Սուրբ Սահակ Պարթեւ մեկօրյա դպրոցը:

Ավելացնենք, որ դեռեւս անցյալ դարի 40-50-ական թվականներին, Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանից, Գուրիայի, Իմերեթիի եւ Սամեգրելոյի քաղաքներում արտադրական եւ մշակութային նոր օբյեկտների շինարարության համար, Վրաստանի կառավարության կոչով տեղափոխվեցին բավական թվով շինարարներ, որոնք էլ իրենց ընտանիքներով բնակություն հաստատեցին այդ երկրամասերում եւ մինչ օրս ապրում են այդտեղ:

ՑԵՐԵԿՈՒՅԹ՝ ՆՎԻՐՎԱԾ ՄԵԾՆ ԿՈՄԻՏԱՍԻՆ

Օրերս Թբիլիսիի թիվ 104 դպրոցում մենք ներկա գտնվեցինք Մեծն Կոմիտասին նվիրված հանդեսի:

Դպրոցի 10-րդ դասարանցիները բեմ բարձրացան Կոմիտասյան «Կռունկի» հնչյունների ներքո ու հայացքներն ինքնաբերաբար ուղղեցին միջոցառման կազմակերպիչ ուսուցչի՝ մանկավարժական 56 երկար ու ձիգ տարիների փորձառությամբ կրթաշխարհում բարի համբավ ու անուն վաստակած, դպրոցի հայոց լեզվի, գրականության եւ պատմության հմուտ ու վաստակաշատ դասատու Անժելա Ամիրխանյանին:

...Տասներորդցիները սիրո՛վ, նվիրումո՛վ ու հուզակա՛ն ներկայացրեցին Կոմիտաս հանճարի ստեղծագործական ուղին եւ Կոմիտաս մարդու կյանքի եղերական ճանապարհը: Նրանք միաժամանակ ներկայացան ե՛ւ իբրեւ շնորհալի երգեցիկ խումբ, ե՛ւ իբրեւ շնորհալի ասմունքողներ, ե՛ւ իբրեւ շնորհալի պատմողներ: Կատարեցին, այսօր, ավաղ, մոռացության մատնված, Կոմիտասյան՝ «Խնկի ծառ», «Հոյ նազան», «Ծիրանի ծառ», «Գնա, գնա...», «Լուսնյակը շողաց», «Իմ չինարի յարը»... սքանչելի երգերը: Գրական-երաժշտական հյուսվածքում, զարմանալի ներդաշնակությամբ, միահյուսվեցին նաեւ դպրոցի սաներ Ալվինա Միքայելյանի եւ Աննա Համբարձումյանի (պարուսույց՝ Լ.Կաշավանիձե) մենապարերը:

Միջոցառման ավարտին, դպրոցի տնօրեն Իրինա Ժամկոչյանը եւ ուսմասվար Ալմարի Սիրադեղյանը իրենց ջերմ շնորհակալությունը բերեցին Անժելա Ամիրխանյանին ու նրա սաներին՝ այդչափ հետաքրքիր, գեղեցիկ միջոցառման համար, որն իր վառ հետքը կթողնի նրանց անցնելիք ճանապարհին:

ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆ

ԹՈՒՄԱՆՅԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ՝ ՓՈՔՐ ԽԱՆՉԱԼԻԻ ԵՎ ՕՐՈՋԱԼԱՐԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

Հանճարեղ լոռեցու 150-ամյակի կապակցությամբ Փոքր Խանչալիի հանրային դպրոցում տեղի ունեցավ գրական ցերեկույթ՝ «Կախարդական գրչի տերը» խորագրով: Միջոցառումը կազմակերպել էր հայոց լեզվի եւ գրականության ուսուցչուհի Արմենուհի Իսպիրյանը: Միջոցառմանը մասնակցում էին երրորդ, չորրորդ, հինգերորդ եւ տասներկուերորդ դասարանի աշակերտները:

Միջոցառման ծրագրում ընդգրկված էին Թումանյանի կյանքի հայտնի ու անհայտ էջերը, նրա ստեղծագործությունները: Բազմաշնորհ ուսուցչուհու ու տաղանդավոր փոքրիկների կողմից բեմադրվեցին «Անխելք մարդը» եւ «Բարեկենդանը» հեքիաթները, «Թագավորն ու չարչին» բալլադը: Մեծն Լոռեցուն մարմնավորում էր Վոլոդյա Ավագյանը, այսպիսով ապահովելով բանաստեղծի ներկայությունը դահլիճում:

Աշակերտները մեծ սիրով ու ոգեւորվածությամբ էին պատրաստվել միջոցառմանը: Նրանք իրենց գերազանց ելույթով անմոռանալի տպավորություն թողեցին հանդիսատեսի վրա: Իր հեզաճկուն նաիրյան պարով հանդիսատեսին հիացրեց Մարինե Մարոզյանը:

Միջոցառման ավարտին ելույթ ունեցան դպրոցի տնօրեն Համլետ Մահտեսյանը եւ վաստակաշատ ուսուցչուհի Լարիսա Մահտեսյանը: Նրանք գովեստի խոսքերով ոգեւորեցին աշակերտներին, հետագա բեղուն գործունեություն մաղթեցին շնորհաշատ ուսուցչուհի Արմենուհի Իսպիրյանին:

* * *

Թումանյանական միջոցառումները մեկնարկեցին նաեւ Ախալքալաքիի մունիցիպալիտետի Օրոջալար գյուղի հանրային դպրոցում: Կազմակերպիչն էր հայոց լեզվի եւ գրականության ուսուցչուհի Երանուհի Սանոսյանը:

Միջոցառմանը մասնակցում էր 50-ից ավելի աշակերտ: Այն համեմված էր Թումանյանական շնչով, հայկական ազգագրական երգ ու պարով: Թումանյանին նվիրված այս գեղեցիկ միջոցառումը սկսվեց «Անուշ» պոեմից հատվածների բեմադրությամբ: Բանաստեղծի ներկայությունը դահլիճում ապահովում էին ոչ միայն նրա ստեղծագործությունները, այլ նաեւ՝ նրան մարմնավորող Ժորա Նորսոյանը, ով այնքան գեղեցիկ էր կատարում իրեն վստահված այդ անչափ կարեւոր դերը:

Թումանյանի ծննդյան օրը հատկանշական է նաեւ գիրք նվիրելու արարողությամբ: Վիրահայոց թեմում այս գեղեցիկ ավանդույթի հիմնադիրը վաղամեռիկ բանաստեղծուհի, հայվրացական բարեկամության դեսպան Անահիտ Բոստանջյանն էր: Օրոջալարի հանրային դպրոցի աշակերտները չէին խախտել այս գեղեցիկ ավանդույթը: Բարձր դասարանի աշակերտները գրքեր նվիրեցին տարրական դասարանի աշակերտներին, իսկ ուսուցչուհին՝ Հով.Թումանյանի հեքիաթների պատկերազարդ ժողովածուն նվիրաբերեց դպրոցի գրադարանին: Աշակերտները մեծ պատվով կատարեցին իրենց առջեւ դրված հանձնարարությունը, գերազանց ելույթ ունեցան ու արդարացրեցին իրենց ուսուցչուհու սպասելիքները:

Օրոջալարի հանրային դպրոցի ուսուցչական կոլեկտիվի անունից շնորհակալություն ենք հայտնում Երանուհի Սանոսյանին ստացված միջոցառման ու իր քրտնաջան աշխատանքի համար եւ մաղթում ենք բեղուն աշխատանքային գործունեություն հետագա տարիների ընթացքում:

ԱՐՄԵՆՈՒՀԻ ՊՈՂՈՍՅԱՆ
Ախալքալաքիի մունիցիպալիտետի Օրոջալարի հանրային դպրոցի երկլեզու ուսուցչի օգնական, Թբիլիսիի Իլիայի անվան պետական համալսարանի հումանիտար գիտությունների ֆակուլտետի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողուհի

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ

ՇՆՈՐՀԱՎՈՐ ԾՆՈՒՆԴԴ, ՍԻՐԵԼԻ՛ ՏՆՕՐԵՆ

Ինչքան որ հուր կա իմ սրտում - բոլորը քեզ. // Ինչքան կրակ ու վառ խնդում - բոլորը քեզ.- // Բոլո՜ր տամ ու նվիրեմ, ինձ ո՛չ մի հուր թող չմնա՝ // Դո՜ւ չմրսես ձմռան ցրտում.- բոլո՜ր քեզ...

Եղիշե Չարենց

Եղիշե Չարենցի այս խոսքով ենք ուզում մենք՝ Դամալայի հանրային դպրոցի մանկավարժական կոլեկտիվը, խորին հարգանքով շնորհավորել դպրոցի տնօրեն Նելլի Դուդուկչյանին՝ ծննդյան տարեդարձի առթիվ:

Կրթության ոլորտում Ձեր ունեցած ձեռքբերումներով դրական օրինակ եք ծառայում մեր դպրոցի հրաշք մանուկների համար: Հիանում ենք, թե ինչպես եք կարողանում առաջադիմական հայացքներ սերմանել մատաղ սերնդի մեջ: Հեշտ է Ձեր մասին խոսել, քանի որ ապրել եք բացառիկ հարուստ եւ արգասաբեր ստեղծագործական կյանք, անցել մի ուղի, որ արժանի է հիացմունքի եւ երախտագիտության: Ձեզ համար է ասված՝ պրպտող, արարող, կյանքով լեցուն ու հարուստ ներաշխարհով անձնավորություն, եւ դրա կողքին՝ լավ մայր ու լավ քաղաքացի: Հպարտանալու տեղիք է տալիս այն իրողությունը, որ տարբեր առիթներով դպրոց այցելած պետական այրերը, անվանի դեմքերը, բարեգործները իրենց հիացմունքն են արտահայտել Ձեր անձնվեր աշխատանքի նկատմամբ:

Իր գոյության տարիների ընթացքում դպրոցը կյանք է ճանապարհել արժանավոր շրջանավարտների, ովքեր, բարձր պահելով դպրոցի պատիվը, գտել են կյանքում իրենց տեղն ու դերը: Այս դպրոցը մի մեծ ընտանիք է, որի ամեն անդամ ունի գիտակցումն այն գործին, որն արվում է ազնիվ, կիրթ, հայրենասեր, մարդասեր սերունդ դաստիարակելու համար, որի մասն էլ Դուք եք: Հարգաժան տնօրեն, ուզում ենք, որ քո պայծառ տեսակն անպակաս լինի մեր մասնագիտական դաշտից ու ընկերական հանրույթից:

Ծնունդդ շնորհավոր, սիրելի՛ տնօրեն, թող միշտ հաջողությունն ու երջանիկ պատահականությունները պլանավորեն Ձեր կյանքը: Թող բազում աշակերտներ Ձեր շնորհիվ ունենան իրենց կյանքի ճանապարհը:

Սիրելի՛ Նելլի Դուդուկչյան, առողջ եղեք, Ձեզ երկար ու արգասաբեր կյանքի տարիներ ենք մաղթում, որպեսզի շարունակեք Ձեր մեծ նպաստը բերել սերունդների ուսուցման ու դաստիարակության վեհ գործին: Շարունակե՜ք Ձեր հարուստ ու կենսուրախ ներկայությամբ զարդարել կյանքը:

Բարի տարեդա՜րձ...

Դամալայի հանրային դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

«Վրաստան» թերթի խմբագրությունը ի սրտե միանում է բարեմաղթանքներին եւ իր կողմից տիկին Նելլիին ցանկանում քաջառողջություն եւ հաջողություններ շնորհակալ գործունեության մեջ:

ՀԱՐՑ - ՊԱՏԱՍԽԱՆ ❋ ԱՅԼԱԶԱՆ ❋ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ՎԱՐԿԱՆԻՇ

«ԱՄԵՆԱՀԶՈՐ» ԱՆՁՆԱԳՐԵՐՈՎ ԵՐԿՐՆԵՐԻ ՇԱՐՔՈՒՄ ՎՐԱՍՏԱՆԸ 49-ՐԴՆ Է, ԻՍԿ ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ 78-ՐԴԸ

Իմայել եմ, որ երկրները դասակարգվում են ոչ միայն իրենց ռազմական, տնտեսական կամ այլ չափանիշներով, այլեւ անձնագրերով: Այսինքն, այն երկիրն է համարվում «հզոր», որի անձնագրով քաղաքացիները կարող են այցելել շատ երկրներ: Հետաքրքիր է, նման դասակարգմամբ մեր Վրաստանը, Հայաստանը ո՞ր տեղում են:

Վ.Սարգսյան

Թբիլիսի

Իրոք, առանձին փորձագետներ անց են կացնում նման ուսումնասիրություն եւ կազմում «հզոր» անձնագիր ունեցող երկրների ցուցակը: Այսպես, Henley & Partners շվեյցարական ընկերությունը կազմել է «ամենահզոր» անձնագրերով երկրների վարկանիշը: Դրանում առաջին դիրքն զբաղեցրել է Ճապոնիան: Ճապոնական արտասահմանյան անձնագրի տերերը կարող են այցելել 190 երկիր, ընդ որում, կարիք չունենալով ստանալ մուտքի այցագիր:

Երկրորդ տեղը կիսել են Սինգապուրը եւ Հարավային Կորեան, որոնց բնակիչները անայցագիր մուտքի իրավունք ունեն 189 երկիր: Առաջատարների եռյակը եզրափակում են Ֆրանսիան եւ Գերմանիան՝ յուրաքանչյուրը 188 երկիր ցուցանիշով: Վարկանիշի հաջորդ տեղերն զբաղեցրել են Դանիան, Ֆինլանդիան, Շվեդիան եւ Իտալիան (187), Լյուքսեմբուրգը եւ Իսպանիան (186), Ավստրիան, Նիդերլանդները, Շվեյցարիան եւ Պորտուգալիան (185): Նրանց հաջորդում են Ավստրալիան, Իսլանդիան եւ Նոր Զելանդիան, որոնց քաղաքացիները կարող են առանց այցագրի այցելել 181 պետություն ու տարածք: Անայցագիր մուտքի ամենահամեստ հնարավորություններն ունեն Պակիստանի արտասահմանյան անձնագրերի տերերը (33), Սոմալին եւ Սիրիան (32), ինչպես նաեւ՝ Աֆղանստանն ու Իրաքը (30):

Ինչ վերաբերում է Վրաստանին եւ Հայաստանին, ապա, Վրաստանի անձնագիրը, 2019 թվականի գլոբալ ինդեքսի վարկանիշում, զբաղեցրել է 49-րդ հորիզոնականը: Նախորդ տարվա համեմատ, Վրաստանը դիրքերը բարելավել է մեկ հորիզոնականով: Վրաստանի անձնագրով հնարավոր է՝ առանց վիզա մեկնել 114 երկիր: Հայաստանը վարկանիշում 78-րդ տեղում է, իսկ Ադրբեջանը՝ 73-րդ:

ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ

ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՏՀԱՃՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գարունը հաճելի եղանակի, արեւոտ եւ պայծառ օրերի հետ միասին բերում է, այսպես ասած, սեզոնային հիվանդություններ: Օրինակ՝ գարնանային ալերգիան, որը երբեմն շատ նման է մրսածությանը: Ի տարբերություն հասարակ մրսածության, ալերգիան ավելի երկար եւ մասնագիտական բուժում է պահանջում:

Գարնանային ալերգիան առավել հայտնի է՝ պոլինոզ անվամբ: Պոլլին լատիներենից թարգմանաբար նշանակում է ծաղկափոշի: Ինչպես գրեթե բոլոր բառերը, այս բառը եւս հայերը փորձել են թարգմանել, անվանելով՝ փոշախտ: Իսկ ինչն է դառնում փոշախտի պատճառ:

Պոլինոզի պատճառը ծաղկափոշին է, այդ իսկ պատճառով էլ ալերգիայի այս տեսակը իհայտ է գալիս հենց գարնան ամիսներին: Ծառերն ու ծաղիկները ծաղկում են, եւ օդը լցվում է ծաղկափոշով:

Տարբեր մարդկանց մոտ այս հիվանդությունը տարբեր ձեւով է արտահայտվում: Բոլոր դեպքերում՝ այն ախտահարում է լորձաթաղանթը: Այն կարող է ախտահարել քթի լորձաթաղանթը, այս դեպքում հիվանդությունն արտահայտվում է առատ քթարտադրությամբ, կարող է ախտահարել աչքի լորձաթաղանթը՝ առաջ բերելով առատ արցունքարտադրություն, կարող է առաջացնել կոկորդի քոր եւ այլն: Եթե հիվանդությունն ավելի է խորանում, կարող է առաջանալ բրոնխիալ ասթմա:

Պոլինոզը պետք է բուժել: Բուժումը կարելի է կատարել հիվանդության երկու շրջաններում՝ կամ հանգստի շրջանում՝ ձմռան ամիսներին, կամ էլ հիվանդության ակտիվ շրջանում՝ ամռան ամիսներին:

Այն պնդումները, թե ալերգիան երբեք չի բուժվում, ըստ Աննա Օհանյանի, ոչ միշտ է ճիշտ: Ճիշտ բուժման դեպքում՝ հնարավոր է 100 տոկոսանոց արդյունք:

Բուժման արդյունավետության համար շատ կարեւոր է նաեւ հիվանդի ճիշտ վարքագիծը: Գարնանային ալերգիկ հիվանդությամբ տառապողներին մասնագետները խորհուրդ են տալիս տնից դուրս չգալ առավոտյան ժամերին, խուսափել սաղարթախիտ անտառներում կամ բուսականությամբ հարուստ վայրերում զբոսանքներից, իսկ դուրս գնալիս՝ անպայման կրել պահպանիչ ակնոց:

Հիվանդը պետք է բնակարանը հնարավորինս ազատի փափուկ կահույքից, գորգերից, տուն վերադառնալով հագուստը պետք է անպայման փոխի, ընդ որում այդ հագուստը թողնելով տան նախամուտքում, այնուհետեւ պետք է ամեն օր լոգանք ընդունի, ընդ որում պետք է լվանալ նաեւ մազերը:

Ալերգիաները կարող են առաջանալ ամեն ինչից՝ տարբեր տեսակի սննդատեսակներից՝ կաթնամթերքից, ծովամթերքից, ցիտրուսային մրգերից եւ այլն, կենդանիներից, բույսերից, կենցաղային տարբեր իրերից: Ալերգիայի բուժման նպատակով գործածվում են ալերգեններ, որոնք լինում են 4 տեսակի՝ սննդային, կենցաղային, բուսական, էպիդերմալ: Վերջինս կիրառվում է կենդանիների մազից առաջացած ալերգիաների բուժման համար: Բայց բոլոր թվարկված ալերգիաներից միայն պոլինոզն է, որ սեզոնային բնույթ է կրում:

Խորհուրդ է տրվում, ալերգիայի նախանշաններ նկատելիս, անմիջապես դիմել մասնագետի եւ խուսափել հիվանդության հետագա զարգացումից:

ԳԻՏԵ՞Ք, ԱՐԴՅՈՔ...

ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԱԵՐՋԱՆԻԿ ԵՎ ԱՄԵՆԱԱՌՈՂՋ ԵՐԿՐՆԵՐԸ

Ֆինլանդիան երկրորդ տարին անընդմեջ գլխավորել է աշխարհի ամենաերջանիկ երկրների World Happiness Report վարկանիշը: World Happiness Report զեկույցում գնահատվում են աշխարհի 156 երկրներ եւ հաշվի են առնվում այնպիսի ցուցանիշներ, ինչպիսիք են կյանքի սպասվող տեւողությունը, սոցիալական աջակցությունը, կոռուպցիան եւ այլն:

Ամենաերջանիկ երկրներ են նշվել նաեւ Դանիան, Նորվեգիան, Իսլանդիան, Նիդերլանդները, Շվեյցարիան, Շվեդիան, Նոր Զելանդիան, Կանադան եւ Ավստրիան: Առաջին տասնյակում չեն հայտնվել ԱՄՆ-ը (19-րդ տեղ), Գերմանիան (16-րդ), Ֆրանսիան (24-րդ) եւ Սաուդյան Արաբիան (28-րդ):

Ամենաերջանիկ երկրներն են դարձել Հարավային Սուդանը (վերջին՝ 156-րդ տեղը), Կենտրոնաֆրիկյան Հանրապետությունը (155-րդ), Աֆղանստանը (154-րդ), Տանզանիան (153-րդ), Ռուանդան (152-րդ) Եմենը (151-րդ) եւ Մալավին (150-րդ տեղը),

Ինչ վերաբերում է ամենաառողջ երկրների ցուցակին, ապա, Bloomberg գործակալության վարկանիշով առաջատարը դարձել է Իսպանիան, որը հինգ դիրքով բարձրացել է անցյալ տարվա վարկանիշի համեմատությամբ: Նրան հաջորդում է Իտալիան, որը ցուցակը գլխավորել էր անցյալ տարի: Տասնյակում նաեւ տեղ են գտել Իսլանդիան, Ճապոնիան, Շվեյցարիան, Շվեդիան, Ավստրալիան, Սինգապուրը, Նորվեգիան եւ Իսրայելը:

Վարկանիշը կազմվել է Առողջապահության համաշխարհային կազմակերպության, ՄԱԿ-ի ազգաբնակչության բաժնի եւ Համաշխարհային բանկի վիճակագրության հիման վրա: Ցուցակը կազմելիս՝ հաշվի են առնվել տարբեր գործոններ եւ ռիսկեր: Օրինակ, վարկանիշում երկրի զբաղեցրած դիրքի վրա ազդել են կյանքի տեւողությունը, սանիտարական եւ բնապահպանական իրադրությունը, բնակչության համար բուժօգնության, մաքուր ջրի հասանելիությունը, ծխող եւ չծխող բնակիչների, ինչպես նաեւ՝ այն մարդկանց թվաքանակը, որոնք տառապում են ճարպակալումից:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

ԻՆՔՆԵՐԴ ՊԱՏՐԱՍՏԵՔ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԷԼԻՔՍԻՐԸ

Այս կենսաբմպելիքի մեջ մտնող բաղադրիչները կարելի է գտնել յուրաքանչյուր խանութում:

Հնդկաձավար. երկաթի, միկրո եւ մակրո տարրերի, վիտամինների պահեստ:

Մեղր. յուրահատուկ մթերք՝ օրգանիզմը հյուսվածքների մակարդակի վրա առողջացնող հատկություններով:

Ընկույզ. յուրահատուկ բնական վիտամիններով եւ յուղաթթուներով հարուստ:

Այս բոլոր երեք բաղադրիչները միասին ունենում են առողջացնող ազդեցություն ամբողջ օրգանիզմի վրա:

Այս խառնուրդը կարող են խմել նրանք, ովքեր հիվանդացել են՝ շուտ ապաքինման համար, նրանք, ովքեր ցանկանում են քաշ ավելացնել, նրանք, ում պակասում է ուժը եւ էներգիան՝ արյան մեջ հեմոգլոբինի ցածր մակարդակի արդյունքում:

Եվ ընդհանրապես, այն խորհուրդ է տրվում օգտագործել գարնանը եւ աշնանը՝ իմունիտետի պահպանման համար:

Պատրաստման եղանակը. 1կգ հնդկաձավար, 1 կգ մաքրած ընկույզ, 0,7 կգ մեղր:

Հնդկաձավարը պետք է լավ աղալ սրճաղացով, ընկույզը անցկացնել մսաղացով: Ամբողջի վրա մեղր լցնել եւ շատ լավ խառնել: Պահել սառնարանում:

Օգտագործման եղանակը. պատրաստի խառնուրդը պետք է ընդունել օրը երեք անգամ մինչեւ ուտելը, մեկ ճաշի գդալ՝ մեկ ամսվա ընթացքում: Ցանկության դեպքում՝ կարելի է ավելացնել աղացած ծիրանաչիր կամ չամիչ: Մեկ կուրսից հետո դուք կզգաք ձեզ առողջ եւ ուժեղ:

ԹԵՎԱՎՈՐ ՍՏՔԵՐ



❑ Երբեմն հրաշքներն այնքան չնչին են լինում, որ մարդիկ դրանք պարզապես չեն նշմարում:

❑ Մարդիկ տարօրինակ արարածներ են: Նրանք անդադար գարշելի արարքներով վնասում են միմյանց, սակայն զղջում են ու ներողամտություն հայցում Աստծոց:

❑ Մենք ծնվում ենք ճիչով, մեռնում՝ տնքոցով: Մնում է եզրակացնել, որ պետք է ապրել ծիծաղելով:

❑ Երբ խնդիրներ ունեք, գրկեք ձեր երեխային: Այդ ժամանակ դուք կհասկանաք, որ, եթե նա ձեր կողքին է՝ ողջ ու առողջ, դուք ոչ մի խնդիր էլ չունեք: Մնացած ամենը պարզապես կյանքի մանրուքներ են:

❑ Ձեր աչքերը ձեզ միայն սահմաններն են ցույց տալիս: Նայեք սրտով եւ կտեսնեք այն ճանապարհը, որով գնալու դեպքում՝ դուք կարող եք սավառնել:

❑ Երջանկությունը նման է թիթեռի: Որքան շատ ես փորձում նրան որսալ, այնքան ավելի շատ է այն հեռու փախչում: Բայց եթե ուշադրությունդ այլ բաների վրա սեւեռես, նա կգա ու լուռ կնստի ուսիդ:

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ՝ ԱՊՐԻԼՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Ապրիլյան քառօրյա պատերազմի տարելիցի առիթով՝ աշխատանքային այցով Ստեփանակերտում գտնվող Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանը, Արցախի նախագահ Բակո Սահակյանի եւ Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսյանի հետ, Մարտակերտի շրջանի Մաղավուզ գյուղում, մասնակցել է Արցախյան գոյամարտում իրենց կյանքը նվիրաբերած 17 մաղավուզցիների հիշատակը հավերժացնող հուշարձանի բացման հանդիսավոր արարողությանը:

Արցախի նախագահը, 2016թ. ապրիլյան ռազմական գործողությունների ընթացքում ցուցաբերած արիության համար, մի խումբ մաղավուզցիների հանձնել է Արցախի պետական պարգեւներ:

ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՐԻՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ



Ապրիլի 2-ին, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը հանդիպում ունեցավ Հայաստանի գործատուների հանրապետական միության նախագահ Գագիկ Մակարյանի եւ սփյուռքահայ մի խումբ ներդրողների հետ:

Հանդիպմանը Նիկոլ Փաշինյանը կարեւորեց ներդրողների հետ հանդիպումները եւ՝ բիզնես միջավայրի բարելավման, տարբեր ներդրումային ծրագրերի շուրջ քննարկումները: Վարչապետը նշեց, որ դրանք լավ հնարավորություն են տալիս կառավարության անդամներին լսել գործարարների բարձրացրած հարցերը, խնդիրներն ու առաջարկությունները:

Գագիկ Մակարյանը տեղեկացրեց, որ արտերկրից մոտ ժամանակներս պատրաստվում են Հայաստան ժամանել ներդրողների նոր խմբեր, որոնք շահագրգռված են, գործարար միջավայրի բարելավման պայմաններում, տարբեր ոլորտներում ներդրումային ծրագրերի իրականացմամբ: Նրա խոսքով՝ Հայաստանի դիրքերը ներդրողների շրջանում գնալով ամրապնդվում են, եւ դա լավ հնարավորություն է նոր ներդրումներ ներգրավելու:

Այնուհետեւ ներդրողները վարչապետին ներկայացրեցին էներգետիկայի, շինարարության, նորագույն տեխնոլոգիաների ոլորտներում նախատեսվող ներդրումային ծրագրերը, որոնց շուրջ տեղի է ունեցել շահագրգիռ քննարկում:

Նիկոլ Փաշինյանը նշեց, որ Հայաստանի կառավարությունը ողջունում է գործարարների նախաձեռնությունները եւ պատրաստ է, իր գործիքակազմերի շրջանակում, օժանդակել ներդրումային ծրագրերի կյանքի կոչմանը:

Ներդրողները նշել են, որ ողջունում են Նիկոլ Փաշինյանի գլխավորած կառավարության քաղաքականությունն ու գործարար միջավայրի բարելավման ուղղությամբ իրականացվող քայլերը, եւ համոզմունք հայտնել, որ դրանք կնպաստեն ոչ միայն արտասահմանցի ներդրողների ներգրավմանը, այլեւ՝ հայրենիքում սփյուռքահայ գործարարների ներուժի համախմբմանը:

ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆՆ ԱՋԱԿՑՈՒՄ Է ՄԻՆՍԿԻ ԽՄԲԻ ՀԱՄԱՆԱԽԱԳԱՀՆԵՐԻՆ

Եվրոպական միությունը վերահաստատում է լիարժեք աջակցությունը ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներին՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը կարգավորելու գործընթացում:

Այս մասին հայտարարություն է տարածել ԵՄ արտաքին գործերի ու անվտանգության քաղաքականության հարցերով մամուլի քարտուղար Մայա Կոսյանչիչը՝ անդրադառնալով մարտի 29-ին, Վիեննայում ԵԱՀԿ ՄԽ համանախագահների հովանու ներքո, Հայաստանի եւ Ադրբեջանի ղեկավարների հանդիպմանը:

«Հուսադրող են ղեկավարների հավատարմությունը հրադադարի ռեժիմն ամրապնդելու եւ խաղաղության համար բարենպաստ պայմաններ ստեղծելու, ինչպես նաեւ՝ նրանց պատրաստակամությունը քայլեր ձեռնարկել արդյունավետ բանակցությունները շարունակելու ուղղությամբ: Եվրոպական միությունն անհամբերությամբ սպասում է ինչպես հումանիտար ոլորտում Վիեննայի պայմանավորվածության, այնպես էլ՝ ժողովուրդներին խաղաղության նախապատրաստելու համաձայնության ուղղությամբ, քայլերի մշակմանը, ինչի մասին պայմանավորվել են արտաքին գործերի նախարարները Փարիզում, 2019 թվականի հունվարի 16-ին: Եվրոպական միությունը պատրաստ է աջակցել այդ ուղղությամբ գործադրվող ջանքերին: Եվրոպական միությունը կրկին վերահաստատում է լիարժեք աջակցությունը ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներին, այդ թվում՝ Հարավային Կովկասում եւ Վրաստանում ճգնաժամի հարցերով ԵՄ ներկայացուցչի միջոցով, ինչպես նաեւ՝ քաղաքացիական հասարակությունների շրջանում վստահության ամրապնդման միջոցառումների շրջանակներում»,- ասված է հայտարարության մեջ:

ԴՐԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ՝ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Ապրիլի 4-ին, Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն, Հայաստանի նկատմամբ գործող մոնիտորինգային գործընթացների շրջանակներում, ընդունել է Հայաստանի կողմից կազմակերպության առջեւ ստանձնած պարտավորությունների կատարման վերաբերյալ որոշում:

Որոշման մեջ նշվել է, որ այսուհետ Հայաստանի կողմից ստանձնած պարտավորությունների կատարման մոնիտորինգը կիրականացվի «Հայաստանի հետ համագործակցության իրավիճակի պարբերական դիտարկման» միջոցով, որը փաստացի փոխարինում է, այսպես կոչված, «հետանդամակցային» մոնիտորինգի ձեւաչափին: Այս որոշմամբ նախարարների կոմիտեն իր քաղաքական ուղերձն է հղել Հայաստանին՝ որպես դրական գնահատական երկրում տեղի ունեցող ժողովրդավարական փոփոխություններին:

Քննարկումների ընթացքում անդամ պետությունները բարձր են գնահատել Հայաստանի կառավարության կողմից իրականացվող քայլերը՝ իրավունքի գերակայության, մարդու իրավունքների պաշտպանության ու ժողովրդավարության ամրապնդման ուղղությամբ:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԸ ԿԱԶՄԵԼ Է 6,5 ՏՈԿՈՍ

Հայաստանի ազգային վիճակագրական կոմիտեի հրապարակած նոր տվյալների համաձայն, երկրում տնտեսական ակտիվության ցուցանիշը, այս տարվա հունվար-փետրվարին, 6.5 տոկոսով աճել է՝ 2018-ի նույն ժամանակահատվածի համեմատ:



Մասնավորապես, զգալիորեն աճել է շինարարության ծավալը՝ 21.6 տոկոսով: Առեւտրի շրջանառությունում աճը կազմել է 13.1 տոկոս, իսկ մատուցած ծառայությունների ծավալն ավելացել է 17.5 տոկոսով:

2019-ի հունվար-փետրվարի արդյունաբերական արտադրանքի ծավալն ավելացել է 1.9 տոկոսով: Սպառողական գների ինդեքսն աճել է 1.3 տոկոսով, իսկ արդյունաբերական արտադրանքի գների ինդեքսը նվազել է 1 տոկոսով:

Էլեկտրաէներգիայի արտադրության ծավալը նվազել է 21 տոկոսով:

Միջին ամսական անվանական աշխատավարձը Հայաստանում հունվար-փետրվարին աճել է 4.9 տոկոսով՝ կազմելով 174 հազար 854 դրամ: Ընդ որում՝ պետական օղակում միջին ամսական աշխատավարձն ավելացել է 2.3 տոկոսով, իսկ ոչ պետականում՝ 4.9 տոկոսով:

ՀԱՍՏԱՏՎԵԼ Է 146 ՄԻԼԻՈՆ ԴՈԼԼԱՐԻ 13 ԾՐԱԳԻՐ

Ընթացիկ տարվա առաջին եռամսյակում, Հայաստանի կառավարության որոշումների արդյունքում, հաստատվել է 13 ծրագիր, ինչի արդյունքում ակնկալվող ներդրումների ծավալը կազմում է 146 միլիոն ԱՄՆ դոլար, իսկ ակնկալվելիք բացվող աշխատատեղերի թիվը՝ 912: Այդ մասին հայտարարեց վարչապետ Նիկոլ Փաշինյանը՝ ավելացնելով, որ խոսքը միայն արտոնյալ ռեժիմով ներդրումների մասին է: Վարչապետը նշեց, որ 2018 թվականի առաջին եռամսյակում հաստատվել է վեց ծրագիր, որի արդյունքում ակնկալվում էր գեներացնել շուրջ հինգ միլիոն դոլարի ներդրում – 140 աշխատատեղ:

- Այսպիսով, 2019 թվականի առաջին եռամսյակում, 2018 թվականի առաջին եռամսյակի համեմատ, նշված ցուցանիշները, ներդրումների մասով, աճել են 27 անգամ, իսկ աշխատատեղերի մասով՝ 6.5 անգամ,- ասաց նա:

ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՆ

Ապրիլի 3-ին, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը, երկրի զինված ուժերի գլխավոր շտաբի պետ Արտակ Դավթյանի ուղեկցությամբ, այցելեց «Բաղրամյան» զորավարժան:

Այստեղ վարչապետին ներկայացրին ՀՀ ԶՈՒ-երի նորագույն ռազմական տեխնիկաները: Նիկոլ Փաշինյանը դիտակետից հետեւել է նաեւ ռազմական տեխնիկաների յուրացման փորձարկումներին:

ԵՐԵՎԱՆՈՒՄ ԲԱՑՎԵԼ Է ԵՎՐՈՊԱՅԻ ՀՐԱՊԱՐԱԿԸ

Հյուսիսային պողոտայի հրապարակը անվանակոչվեց Եվրոպայի անվամբ: Այս միջոցառումը Եվրոպայի խորհրդի հիմնադրման 70-ամյակի առթիվ էր:

Հրապարակի անվանակոչման հանդիսավոր արարողությանը մասնակցում էին Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի նախագահ Լիլիան Մորի Պասքիեն, Հայաստանում հավատարմագրված օտարերկրյա դիվանագիտական առաքելությունների ղեկավարներ:

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ՅՈՒՅՄՈՒՆՔ Է ՏՎԵԼ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՄԻՋԱԴԵՊԻ ԳՈՐԾՈՎ

Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի Շենգավիթ նստավայրում ընթանում է՝ «ելք» դաշինքի անդամների եւ քաղաքացի Արթուր Այվազյանի միջեւ տեղի ունեցած միջադեպի գործով, դատական նիստ:

Դատարանում վկայի կարգավիճակով, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը մանրամասներ ներկայացրեց 2017 թվականի մարտի 31-ին տեղի ունեցած միջադեպի վերաբերյալ:

Հիշեցնենք, որ 2017թ. մարտի 31-ին, ժամը 22:40-ի սահմաններում, Անդրանիկի փող. 53 շենքի բակում տեղի է ունեցել միջադեպ՝ քաղաքացի Արթուր Այվազյանի եւ «ԵԼՔ» դաշինքի անդամների միջեւ:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ԱՊՐԻԼ



13.04.2019. Ղազարոսի հարության հիշատակության օր

Մեծ Պահքի 41-րդ օրը, Հայաստանյայց Առաքելական եկեղեցում, Ղազարոսի հարության հիշատակի օրն է:

ՄԻՋԱԴԵՊ

ՍՐԲԱՊՂԾՈՒԹՅՈՒՆ ԽՈՒԼԳՈՒՄՈՅԻ ՎԱՆՔ ՍՐԲԱՏԵՂՈՒՄ

Ապրիլի 4-ի առավոտյան, Ախալքալաքիի մունիցիպալիտետի Խուլգումո գյուղի երիտասարդները, ուխտի գնալով Ճգնավոր կամ Վանք կոչվող սրբատեղը, տեսել են, որ մատուռում ամեն ինչ տակնուվրա է արված, սրբապատկերները կոտրված են ու թափված:

Ախալքալաքիի մունիցիպալիտետի Խուլգումո գյուղի սրբավայրում եկեղեցական իրերը վնասելու փաստով՝ Ներքին գործերի նախարարությունը հետաքննություն է սկսել:

«Հետաքննություն է սկսվել 259-րդ հոդվածի առաջին մասի հատկանիշներով (մշակութային ժառանգության կամ Վրաստանի օրենսդրությամբ պաշտպանված այլ մշակութային հուշարձանների կանխամտածված վնաս պատճառել)»,- ասվում է ՆԳՆ-ի հայտարարության մեջ:

ՆԳՆ-ի տեղեկատվությամբ՝ վնասվել է մեկ նկար եւ մեկ խաչ:

Ավելացնենք, որ այս սրբատեղին ստացել է մշակութային ժառանգության հուշարձանի կարգավիճակ:

ՆՈՐՈՒՅԹ

ՎՐԱՍՏԱՆԸ ՍԿՍՈՒՄ Է ՍԵՓԱԿԱՆ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Վրաստանը սկսում է սեփական ավտոմեքենաների արտադրության կազմակերպումը:

Այն իրականացնելու են վրացական Aigroup եւ չինական Changan ընկերությունները, որոնք արդեն ստորագրել են համապատասխան հուշագիրը, որով, առաջին անգամ, Վրաստանը կսկսի արտադրել սեփական թեթեւ մարդատար ավտոմոբիլներ: Վրացական ապագա մեքենաների համար հիմք կհանդիսանան չինական Changan ավտոմեքենաները, սակայն վրացի մասնագետները մտադիր են սեփական ապրանքանիշը ստեղծել: Առաջին մոդելը, ըստ Business Media Georgia-ի, կստեղծվի Changan Eado սեդանի հիմքի վրա: Այն կունենա 1,6 տարողության բենզինով աշխատող շարժիչ՝ 128 ձիաուժ հզորությամբ: Ավելի ուշ կստեղծվեն նաեւ էլեկտրամոբիլներ, որոնցից մեկը կհավաքվի Benni EV360 մեքենայի հիմքի վրա եւ մեկ լիցքավորմամբ կկարողանա անցնել 300 կմ:

ՍԻՄՈՆ ԿԻԼԱՋԵ

ՍՊՈՐՏ

ՖՈՒՏԲՈԼ. ՎԱՐԿԱՆԻՇԸ՝ ԸՍՏ ՑՈՒՑԱԲԵՐԱԾ ԽԱԴԻ ՈՐԱԿԻ

Ապրիլի 4-ին, Ֆուտբոլի միջազգային ֆեդերացիան (ՖԻՖԱ) հրապարակեց ազգային հավաքականների նոր վարկանիշային աղյուսակը:

Ըստ նոր դասակարգման՝ Վրաստանի ազգային հավաքականը նահանջել է 3 տեղով եւ զբաղեցնում է 94-րդ հորիզոնականը: Իր դիրքերից նահանջել է նաեւ Հայաստանի թիմը՝ զիջելով 5 հորիզոնականը, այն հայտնվել է 106-րդ տեղում:

Նման նահանջը պայմանավորված էր, երկու երկրների ազգային հավաքականների կողմից, ընթացիկ տարվա մարտին, Եվրոպայի 2020 թվականի որակավորման փուլի շրջանակներում անցկացրած երկուական անհաջող հանդիպումներով, որի արդյունքում՝ Վրաստանի թիմն իր ենթախմբում զբաղեցնում է վերջին հորիզոնականը, իսկ Հայաստանն իր ենթախմբում նախավերջինն է:

Ինչ վերաբերում է ՖԻՖԱ-ի վարկանիշային նոր աղյուսակին, ապա առաջին տեղում է Բելգիայի հավաքականը, երկրորդում՝ աշխարհի չեմպիոն Ֆրանսիան է: Երրորդ հորիզոնականն է զբաղեցնում Բրազիլիայի ընտրանին:

ՁՅՈՒԴՈ. ԱՆՑԿԱՑՎԵՑ ԹԲԻԼԻՍՅԱՆ ԳՐԱՆ-ՊՐԻ ՄՐՑԱՇԱՐ

Թբիլիսիում անցկացվեց ձյուդոյիստների ավանդական Գրան-պրի մրցաշարը: Թվով վեցերորդ վերոնշյալ մրցաշարի մրցանակային պարգեւը կազմում էր 100 հազար դոլլար: Մրցաշարին մասնակցում էին 52 երկրների շուրջ 400 մարզիկներ: Մասնակիցների նման քանակությունը պայմանավորված էր նրանով, որ թբիլիսյան մրցաշարի հաղթողներն ստանում են միավորներ՝ 2020 թվականի ամառային օլիմպիական խաղերի մասնակցության հավաստագրի ստացման համար:

Ավանդական մրցաշարում առանձնակի հաջող հանդես եկան վրաց ձյուդոյիստները, ովքեր, ընդհանուր առմամբ, իրենց ակտիվում գրանցեցին տարբեր արժողության 10 մեդալներ (2 ոսկե, 2 արծաթե եւ 6 բրոնզե): Վրաց մարզիկները թիմային հաշվարկում զբաղեցրին երկրորդ տեղը՝ զիջելով միայն Ֆրանսիայի ձյուդոյիստներին:

Մրցաշարի մասնակիցների թվում էին նաեւ հայաստանցի մարզիկները, ովքեր հանդես եկան իրենց հնարավորություններից ցածր եւ դուրս մնացին մրցաշարի սկզբնական փուլերում:

ԱՐՄԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՎԱԽՃԱՆՎԵԼ Է ԿԻՆՈՌԵԺԻՍՈՐ ԳԻՈՐԳԻ ԴԱՆԵԼԻԱՆ



Ապրիլի 4-ին, Մոսկվայում, 88 տարեկան հասակում, վախճանվել է ճանաչված կինոռեժիսոր Գիորգի Դանելիան:

Դանելիան ծնվել է 1930 թվականին, Թբիլիսիում, շուտով ընտանիքը տեղափոխվել է Մոսկվա: 1960 թվականին էկրաններ բարձրացավ Դանելիայի «Սերյոժա» դեբյուտային կինոնկարը: Ֆիլմը Գրան-պրիի արժանացավ Կարլովի Վարիի միջազգային կինոփառատոնում: Ռեժիսորին ճանաչում բերեց՝ «Ես քայլում եմ Մոսկվայով» լիրիկական կատակերգությունը: Նա նաեւ նկարահանել է «Երեսուներեք», «Մի' վշտանա», «Աֆոնյա», «Աշնանային մարաթոն», եւ այլ ֆիլմեր: Ռեժիսորին առանձին ճանաչում բերեց նրա նկարահանած «Միմինո» կատակերգությունը՝ Վախթանգ Կիկաբիձեի եւ Ֆրունզիկ Մկրտչյանի մասնակցությամբ:

«Վրաստան» թերթի խմբագրությունը խոր վշտով տեղեկացավ ճանաչված ռեժիսոր Գիորգի Դանելիայի մահվան լուրը եւ ցավակցությունն է հայտնում հանգուցյալի հարազատներին եւ մերձավորներին:

Թբիլիսիի թիվ 104 հանրային դպրոցի մանկավարժական կոլեկտիվը, «Վրաստան» թերթի խմբագրությունը խորապես վշտակցում են Թբիլիսիի թիվ 104 հանրային դպրոցի աշխատակիցներ Հրաչիկ Ներսեսյանին եւ էդիկ Հակոբյանին, սիրելի մոր եւ քրոջ՝

Ռոզա Գալուստի ՆԵՐՍԵՍՅԱՆԻ

մահվան կապակցությամբ եւ՝ ցավակցում հանգուցյալի հարազատներին ու մերձավորներին:

ԽԱՉԲԱՌ



ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Մարմնի որեւէ մասի գործունեության կորուստ՝ արյան զեղման պատճառով: 6.Կյանքը, բնությունը ուսումնասիրող իմաստասեր: 9.Հին իրանական սուրբ գրքերի ժողովածու: 10.Կանադացի դերասան Մարտին ...: 11.Շան ձագ: 13.Պոնչիկ: 14.Համազգեստի ուսին ամրացող տարբերանշան: 15.Գետ Ռուսաստանում: 16.Միամյա տերեւաբանջար: 18.Վրաց երաժիշտ եւ դերասան ... Մենաբդե: 19.Լայն գրունտային ճանապարհ: 21.Ոստայնանկ, մանածագործ: 22.Որեւէ կազմակերպության անդամների ժողով: 24.Հին Եգիպտոսում աստվածների թագավորը եւ փարավոնների իշխանության հովանավորը: 26.Կայուն քամու տեսակ: 28.Ապաշնորհ, վատ գրող: 31.Գազի, ջրի ուժը մեքենայական աշխատանքի փոխարկող շարժիչ: 32.Ձինվորական կոչում: 34.Գետ Ուկրաինայում: 35.Զամբիայի մայրաքաղաքը: 36.Կրակապաշտների կրոնական պաշտամունքի տեղ: 38.Պետություն հյուսիս-արեւելյան Աֆրիկայում: 39.Օպերային մեներգ: 40.Բնության անկառավարելի, անսանձ ուժ: 41.Հեղուկների եւ գազերի ճնշումը չափելու սարք: 42.Հանգստավայր միջերկրական ծովի ափին:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Ծովային խոշոր կաթնասուն: 2.Բժշկության բաժին: 3.Կտորի իրար վրա բերած՝ ծալած մասը, շերտ: 4.Համալսարանային քաղաք ԱՄՆ-ում: 5.Կղզի Միջերկրական ծովում: 6.Հրազենի պարկուճի անցքը բացող եւ փակող հարմարանք: 7.Մողեսի տեսակ: 8.Քրիստոսի 12 աշակերտներից: 12.Որպես պատիժ գանձվող դրամական վճար: 13.Ճշմարիտ իրողություն: 17.Հին պարսկական ոսկեդրամ: 18.Հարգալից դիմելաձեւ կնոջը՝ Ֆրանսիայում: 20.Կանացի երգեցիկ ձայն: 23.Մետաքսե նուրբ գործվածք: 25.Լեհական պար: 26.Ցլամարտի մասնակից: 27.Գյուղական համայնքի կողմից ընտրվող կառավարիչ: 28.«Ալ առագաստներ» վիպակի հեղինակը: 29.Ռուսական շախմատային դպրոցի հիմնադիրը: 30.Քաղաք եւ նավահանգիստ Հնդկաստանում: 33.Կաթնամթերք արտադրող վրացական ֆիրմա: 37.Թագավոր, տիրակալ:

Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Սեբաստացի: 4.Շիրազ: 8.Աննվաճ: 11.Արին: 12.Ծերենց: 14.Արենա: 15.Հաագա: 17.Կետ: 20.Արագվի: 22.Այրում: 24.Հուր: 26.Երակ: 28.Շալախ: 31.Ծնունդ: 33.Եր: 35.Ծամ: 36.Փոթի: 38.Վա: 39.Տոմար: 40.Ձիվանի: 43.Ապ: 44.Ռոլան: 46.Նարե: 48.Քենիա: 51.Ապիրատ: 53.Մարթա: 54.Ախթալա: 55.Ին: 56.Սուս: 59.Կոչնակ: 60.Երանի: 61.Լալուա: 62.Արաբո:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Սպա: 2.Բանբեր: 3.Սրածայր: 5.Իսահակյան: 6.Զանգու: 7.Տրցակ: 9.Ճե: 10.Վեհ: 13.Նա: 14.Այգ: 16.Էգ: 18.Երկու: 19.Տու: 20.Արածանի: 21.Արամ: 22.Արծիվ: 23.Մոդա: 25.Ուշ: 27.Մետաքս: 29.Լար: 30.Խոջա: 32.Նվիրատու: 34.Ռոպե: 37.Թինաթին: 41.Անի: 42.Նար: 45.Ոիմակ: 47.Ետ: 48.Նախքան: 50.Արագիլ: 52.Պանամա: 57.Սերո: 58.Բեկ:

Խմբագիր տեղակալ՝ ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan.press@gmail.com

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445